ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 27 » « ապրիլի » 2018թ.**
ժամը 14:40

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի ապրիլի 27-ին, ժամը 15:00-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3 շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի փետրվարի 7-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «ԳԱՍ շենքերի ու կառույցների տեխհսկողություն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

3.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել՝ «ԳԱՍ շենքերի ու կառույցների տեխհսկողություն» ՍՊԸ-ին:

3.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

3.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

3.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ռ. Զոբանյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Լ. Ավետիսյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Մ.Այդինյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Հ.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Ա.Փաշայան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Լ. Զոհրաբյան